

≠174≠

ԿՈՄՅԵՐԻՑԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ № 38

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԳՐԻԳ.

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՄԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

ԳՐԻԳ.

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ
ՄԱՍԻՆ



Պետական հրատարակչություն

ՅԵՐԵՎԱՆ — 1926

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս աշխատությունը նպատակ ունի տալ համառոտ տեղեկություններ միլիտարիզմի աճման, միլիցիոն սխեմայի ելուծյան, յերկրային զորամասերի կառուցվածքի և յերկրի ռազմականացման խնդիրներին մասին:

Աշխատության համար ոգտագործված են՝

1. Иностранные армии—издание ВНО, 1925 г.
2. Военный зарубежник—журнал, 1925 г.
3. Обзор мирового хозяйства—Кулишер, 1924 г.,
4. Милиционнее строительство- Алксние 1925 г.
5. О милиционной системе, 1925 г.
6. Территориальный сборник 1924 г.

այս բոլորի հետ միասին ընկեր Փ Ե Ո Ւ Ն Գ Ե Յ Ի, Ունշիլիտի, Մեխանոլինի, Կամենսի, Բուրնովի զեկուցումները, Ո. Խ. Խորհրդի պաշտոնական կարգադրությունները և հայկական հրաձիգ զիվիզիայի փորձը յերկրային շինարարություն մասպարիդում:

Հեղինակ

I

„Առանց սոցիալիստական հանրապետության զինված պաշտպանության մենք գոյություն ունենալ չենք կարող: Խորհրդային հանրապետության գոյությունը իմպերիալիստական պետությունների կողքին յերկար ժամանակի ընթացքում անկարելի չէ: Վերջիվերջո կամ մեկը կամ մյուսը կհաղթի: Իսկ մինչ այդ մի շարք ՍՍՀՄ-ի Ընդհանրահամագործակցության Հանրապետության ՅԵՄ ԲՈՒԹՈՒՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՍԱՓԵԼԻ ՅԵՆ: Դա Նշանակում է, վոր պոլետարիատը, վորպես տիրող դասակարգ, յեթե միայն նա ուզում է տիրել յեվ տիրելու չի, այդ պիտի ապացուցի իր ՌԱՉՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՄԵՆ:

ԼԵՆԻՆ

Մեր Խորհրդային Միությունը շրջապատված է կապիտալիստական պետություններով: Ժամանակակից միջազգային դրությունն այնպես է, վոր կապիտալիստական պետությունները մի կողմից իրար հետ են մրցում, իսկ մյուս կողմից միանգամայն թշնամաբար են տրամադրված դեպի մեզ:

Մեր գոյության մեջ նրանք իրենց մահն են տեսնում—բուրժուազիան վախենում է հե-



1-22499

դափոխութիւնից: Վախենում եւ այն պատճառով, վոր հաղթական հեղափոխութիւնը մեզ մոտ եւ աճող հեղափոխական շարժումն ամբողջ աշխարհում համառ փաստ եւ: Բուրժուազիան զուրկ եւ հեղափոխական շարժումը խեղդելու հնարավորութիւնից. եւ վորովհետեւ բոլոր ճնշված բանվորները, գաղութային ժողովուրդները ամբողջ հույսը կապված եւ մեր Միութեան հաղթանակները հետ, ապա հասկանալի չե, թե ինչու բուրժուազիան իր բոլոր հարվածները մեր դեմ եւ ուղղում:

Սակայն բուրժուական աշխարհում եւ գործերն այնքան լավ չեն: Խոշոր կապիտալիստական պետութիւններն իրար հետ կատաղի կերպով մրցում են: Նրանցից ամեն մեկը ձգտում եւ իր ապրանքների համար շուկա ապահովել: Այսոր Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան, Յապոնիան, չնայած վոր շատ խեթ աչքով են նայում մեզ, սակայն իրար հետ եւ լավ չեն: Անհամաձայնութիւնների պատճառները շատ են: Այստեղ կա եւ Գերմանիայից ստացած ավարը բաժանելու խնդիրը, առանձին գաղութների խնդիրը, նավթի, յերկաթի, քարածուխի եւ այլ խնդիրները: Վորովհետեւ այս բոլոր պետութիւնները ներքին կյանքը խաղաղ չե՝ բանվորութիւնը, հեռանալով II Ինտերնացիոնալից, հեղափոխակա-

նանում եւ, կազմակերպվում եւ, ու գաղութային ճնշված ազգութիւններն ապստամբում են — որինակ՝ Չինաստանում, Մարոկկոյում, Սիրիայում, Հնդկաստանում եւ այլն — դրա համար կապիտալիստական իշխող պետութիւնները հարկադրված են մեծ զգուշութեամբ վերաբերվել իրար: Բուրժուազիան իր տիրապետութեան չորս հարյուր տարվա ընթացքում սովորել եւ կառավարել: Նա ստիպված եւ այսօր հեղափոխութեան աճող ուժերը հաշիւ առնել. յետեւ այդ չլինել, բուրժուական պետութիւնները վաղուց կամ մեր կամ իրար կոկորդից բռնած կլինեյին: Բուրժուազիան փորձում եւ այսօր իր շարքերում յեղած անհամաձայնութիւններն զգուշութեամբ լուծել: Ամիս չի անցնում, վոր մի վորեւէ կոնֆերանս կամ խորհրդակցութիւն չհրավիրվի: Մեկ տեսնում ես՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի արտաքին գործոց մինիստրներն են խորհրդակցութիւն գումարում, մեկ Ազգերի Լիգան եւ հավաքվում, եւ այդպես անվերջ: Այս հավաքույթներում բուրժուական պետութիւնները մի կերպ կարկատան հնարելով՝ համաձայնեցնում են իրենց շահերն ու միաժամանակ փառավոր կերպով զինվում են ու պատերազմի պատրաստութիւններ տեսնում: Միամիտ բանվորների եւ գյուղացիների աչքերը կապելու համար բուրժուազիան

յերբեմն զինաթափման մասին դատարկաբանելու համար կոնֆերանսներ ե հրավիրում, իսկ այսօր Գերմանիային «յերաշխավորության» դաշնագիր ե ստորագրել տալիս՝ իբր թե պատերազմի առաջն առնելու համար։ Այդ դաշնագրով բուրժուազիան ուզում ե ցույց տալ, վոր ինքը շատ խաղաղասեր ե, և վոր իբր թե վտանգը նորից Գերմանիայից ե գալիս։ Մենք վոչ բուրժուական Գերմանիային ենք հավատում, թեպետ նա պատերազմից հետո մինչև հիմա յել ուշքի չի գալիս, վոչ ել Անգլիային կամ Ֆրանսիային։ Բոլորն ել մի պտուղ են—բոլորն ել մեր դեմ են, բոլորն ել մեր դեմ են պատրաստվում։

Մեր տրամադրության տակ յեղած տեղեկություններից յերևում ե, վոր բոլոր պետությունները հսկայական գումարներ են վատնում իրենց բանակների և առհասարակ զինվորական կարիքների վրա։ Ամերիկայի պետական ծախսերի ամեն մի հարյուր ուրբուց 20 ուրբլին զնում ե ռազմական կարիքներին, Յապոնիան իր պետական ծախսերի ամեն մի հարյուր ուրբուց 35 ուրբլին տալիս ե ծովային-ռազմական ուժերին, մեր Միության սահմանակից Լեհաստանն իր ամեն հարյուր ուրբուց 40 ուրբլին տալիս ե բանակին։

Յեթե պատերազմի պատրաստություն չեն

տեսնում, ապա ինչո՞ւ յեն այդքան փող վատնում։

1923—24 թվականների ընթացքում Ֆրանսիան շինել ե 118 ռազմանավ—դրանցից 84 ը սուզանավեր, իսկ Յապոնիան՝ 73։

Այս թվերը պարզ ապացուցում են, վոր իմպերիալիստական պետությունները պատերազմի լուրջ նախապատրաստություններով են զբաղված։ Իսկ յեթե սրան ավելացնենք ռազմական տեխնիկայի զարգացումը, ապա պատկերը միանգամայն պարզ կլինի։

Ֆրանսիական ինժեներները խիստ մտահոգված են այնպիսի թնդանոթների հնարումով, վորով կարելի լինի Ֆրանսիայից ռմբակոծել Լոնդոնը—Անգլիայի մայրաքաղաքը. Ամերիկան խեղդող ու թունավորող գազերի գյուտերով ե զբաղված, իսկ Անգլիան կատարելագործում ե իր զենքերը, զնդացիրները։ Առանձին ուշադրություն են դարձնում բոլորն ել ողային նավատորմիդի վրա։ Այս խնդրում առաջին տեղը Ֆրանսիան ե բռնում։ Այժմ Ֆրանսիայի բանակում գործում են 1280 ուղանավ. ծրագրվում ե այդ թիվը հասցնել 2200-ի։ Յեթե նա ուզենա, իր ռազմական ուղանավերի թիվը կարող ե հասցնել միքանի տասնյակ հազարների և պատերազմի ժամանակ այդպես ել անելու յե։ Շարունակ փորձում են կատարելա-

գործված մեքենաներ ռազմական ոդանավերի համար: Ամերիկան ունի արդեն ոդանավեր, վորոնք վեց մեքենայով են բարձրանում և ընդունակ են միքանի տասնյակ մարտիկներ տեղափոխել ուղած տեղը: Բուրժուական գիտական միտքն ամբողջապես զբաղված է ռազմական տեխնիկայի կատարելագործումով—չէ՞ վոր բուրժուական պետութիւնների մեջ գիտութիւնը բուրժուազիային է ծառայում:

Կապիտալիստական արդյունաբերութիւնը զարգանում է այն հաշվով, վոր պատերազմի ժամանակ կարողանա վորքան կարելի յէ շատ մարդասպան գործիքներ պատրաստել: Հետաքրքրականն այն է, վոր 1917 թվի ընթացքում ողանավային արդյունաբերութիւնն այն աստիճան զարգացել էր, վոր նրա գործարաններն այդ թվին պատրաստեցին 34,241 ողանավային մեքենա. իսկ Գերմանիան նույն ժամանակում յուրաքանչյուր ամիս պատրաստում էր 2195 ռազմական ողանավ:

Այս բոլոր տվյալների հիման վրա չափազանց դժվար է նախատեսել և պատկերացնել զանազան զենքերի, գազերի, ողանավերի, տանկաների այն քանակը, վոր ապագա պատերազմի ժամանակ այս կամ այն կապիտալիստական պետութիւնը կցուցահանի: Պետք է յենթադրել,

թէ ամբողջ արդյունաբերութիւնն յայնպիսի չտեսնված լարվածութեամբ կաշխատի, վոր ուղղակի վիթխարի թվերով զենք ու ռազմամթերք կարտադրի:

Ապագայի պատերազմում բուրժուազիան ձգտելու յէ տեխնիկայով իշխող լինել: Նա հենց հիմա գործն այնպես է կազմակերպում, վոր միքանի որում յերկիրը վտաքի կանգնեցնի պատերազմի համար:

Ապագա պատերազմի թափը նախատեսել դժվար է: Միքանի թվեր բերենք անցյալ իմպերիալիստական պատերազմից—գուցե դա մեր յերևակայութեան առաջ պատկերացնի այն, ինչ կարող է լինել նոր պատերազմի դեպքում:


1914-18 թվականների համաշխարհային իմպերիալիստական պատերազմը մարդկութեանը նստեց 416 միլիարդ ուրբի, այն ինչ 1793 թվից մինչև 1905 թվը զանազան պետութիւնների միջև տեղի ունեցած տասնըյերեք պատերազմները ընդամենը 41 միլիարդ ուրբի ծախս ունեցան: Չորս տարվա ընթացքում ծախսվեց 10 անգամ ավելի, քան 113 տարվա ընթացքում: Յերկու հարյուր տարվա ընթացքում, 1713—1914, համաշխարհային պարտքն աճեց ու հասավ 88 միլիարդ ուրբու, իսկ իմպերիալիստական պատերազմի ընթացքում հասավ 451 միլիարդի: Այդ-

պիսի կատարի ծախսեր կարող եր կատարել մի-
այն մեռնող կապիտալիստական հասարակությու-
նը: Կովող պետությունների ժողովրդական հա-
լըստության կեսը պատերազմը կլանեց:

Իսկ վրձքան մարդ վոչնչացրեց պատերազմը: —
Սպանվածների և վերքից մեռածների թիվը հաս-
նում է 10 միլիոնի: Կապիտալիզմն իր պառա-
ված հասակում այդքան կյանք վոչնչացրեց: Դա
դեռ վոչնչացվածների թիվն է. իսկ առհասարակ
ֆիզիկապես տուժածների թիվը 25 միլիոնի յե
հասնում:

Իսկ վրձքան մարդ վոտքի հանեց պատե-
րազմը — դա կարևոր է իմանալ, վորովհետև չե՞
վոր մեծաքանակ տեխնիկական միջոցները և
զենքերը դործածողը մարդն էր:

Առաջին դիագրամման (տես մյուս յերես)
ցույց է տալիս կովող խոշոր պետությունների
բանակների քանակային լարվածութունը պա-
տերազմի ժամանակ: Ռուսաստանը, որինակ,
խաղաղ ժամանակ ունենալով 1,320,000 զին-
վոր, պատերազմի ժամանակ իր բանակը հաս-
ցրեց մինչև 6,700,000 մարդու: Ֆրոնտում
այս քանակությամբ մարդ պահելու համար
ցարական կառավարութունը հարկադրված
յեղավ 18,000,000 մարդ զորահավաքի յեն-
թարկել, իսկ դա կազմում է նախկին Ռուսաս-



ԴԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԻՈՐՅԱԿԸ ԲԱՆԱԿԸ ԿԱՐ



ԲԱՆԱԿՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ ԴԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

տանի ամբողջ բնակչության 12⁰/₀ ը հարյուրից 12 ը: Նույնը պետք է ասել նաև ուրիշ պետությունների վերաբերմամբ:

Իմպերիալիստական պատերազմը ցույց տվեց, Վոր ժամանակակից պատերազմները պետք է ընդգրկեն հսկայական մասսաներ, կլանեն հսկայական նյութական ու մարդկային զոհեր:

Ահա ինչու համաշխարհային բանվորությունն ատամներ է կրճատեցնում արյունարբու բուրժուազիայի վրա, ահա ինչու նա այսօր կազմակերպված է պատերազմը կանխելու համար: Վերջիվերջո պատերազմի ծանրությունը բանվորն ու գյուղացին են տանում. բուրժուազիան կառավարում է միայն:

Անցյալ պատերազմում դավաճան II-րդ Ինտերնացիոնալի որհնությամբ բուրժուազիան չսանձահարվեց, նա շռայլում էր բանվորների ու գյուղացիների կյանքն իր գրպանի շահերի համար: Բուրժուազիայի առաջ կանգնած չկար վոչ մի ուժ, նա տեր ու տիրականն էր, նա հրամայում էր:

Այժմ ժամանակները և պայմանները փոխվել են: Այսօր բուրժուազիան նեղն է ընկած: Նրան սանձահարել է III-րդ Կոմմունիստական Ինտերնացիոնալը—իզուր չէ, Վոր վերջերս բուրժուական պետությունները պահանջ էյին դրել

մեզ՝ III-րդ Ինտերնացիոնալը հեռացնել Մասկվայից—նրանք վախենում էյին նրանից, Վորովհետև միլիոնավոր մասսաներ III-րդ Ինտերնացիոնալի հետ են: Ապագա պատերազմի ժամանակ քաղաքացիական կռիվ է բացվելու-- ահա ինչից է վախենում բուրժուազիան: Նա գիտե, Վոր այլևս միանգամայն հնազանդ բանակ կազմակերպել իրեն չի հաջողվել, Վորովհետև գիտակից բանվորները և գյուղացիները զենքը բուրժուազիայի դեմ պետք է շրջեն:

Այնուամենայնիվ բուրժուազիան մինչև ատամները զինված է, նա աշխարհն արյան բաղնիք է ուզում դարձնել, նա ձգտում է Խորհրդային Միությունը, ինչ գնով էլ լինի, խեղդի:

Այսօր նա չափազանց ճարպիկ է, նա զգում է, Վոր հիմա պատերազմի հետ խաղալ չի կարելի, նա տեսնում է, Վոր իր սպասուվոր II-րդ Ինտերնացիոնալի ուժը կորել է, բայց, այնուամենայնիվ, հույսը չի կորցրել:

Պատերազմի վտանգը միանգամայն իրական վտանգ է: Մեր լայն հեղափոխական-կազմակերպչական, հակա-միլիտարիստական պրոպագանդայով մեր գործը պետք է առաջ շարժենք, իսկ մինչ այդ բոլորս պետք է մտահոգված լինենք մեր ազատ յերկրի պաշտպանության խնդրով: Բուրժուական պետությունները մեկ կողմից հաշ-

վի առնելով մեր ուժը՝ մեզ ճանաչում են, իսկ մյուս կողմից շարունակ սպառնալիքներ են կարգում: Անգլիան ահա միջանի անգամ փորձեր ե արել կտրել իր դիվանագիտական հարաբերությունները մեզ հետ, իսկ այժմ կապիտալիստական պետութայունների միացյալ ճակատ ե կադմակերպում մեր դեմ: Մեր Միության արևմտյան սահմանի մանր պետութայունները մեծերի թելադրանքով ռազմական կոնֆերենցիաներ են գումարում ու քննության առնում մեր դեմ ունենալիք պատերազմի ծրագիրը:

Հարձակումների վտանգից վոչնչով ապահովված չենք: Այդ վտանգը կա, անպայման կա, և հեղափոխության հանդեպ մեր ունենալիք ամենամեծ պարտականությունն ե որ անգամ չկորցնել ուժեղացնելու մեր յերկրի պաշտպանությունը:

II

Այն ուրվանից, յերբ վերջացավ մեր թշնամիներնի կողմից մեր շէքին փաթաթած կատաղի քաղաքացիական կռիվը, յերբ մեր յերկիրն անցավ խաղաղ շինարար աշխատանքի, խորհրդային իշխանությունն ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեց, վոր նա պատերազմել չի ուզում:

Սորհրդային իշխանության հաշտության կոչը բուրժուական պետութայուններն ընդունեցին հեգնանքով և մինչև այսօր ել շարունակում են զրպարտել իրենց թերթուկներում ու ամենուրեք, վոր իբր թե Սորհրդային Միությունը պատերազմի պատրաստություններ ե տեսնում, վոր նա հարձակման ե պատրաստվում: Այսպես ամաշկարա ստել կարող ե միայն բուրժուազիան, վորն իր դավադրությունները ծածկելու համար մեզ վրա յե հաշում: Այս հարցում մեզ համար թանգ ե հեղափոխական բանվորների և գյուղացիների կազմերը: Թող նրանք լավ իմանան, լավ ճանաչեն մեզ, վորովհետև նրանք մեզ, մենք ել նրանց իմենք ճանաչում և հասկանում ենք, վոր ապրող աշխարհի միմիայն և միմիայն նրա համար ե, վորպեսզի բուրժուազիան զինվելու համար ձեռք ու վոտը բաց անի:

Մենք ամենուրեք պնդում ենք մեր խաղաղասիրական քաղաքականության վրա և շատ հետևողական կերպով այդ քաղաքականությունն իրագործում ենք: Յեթե մեր խաղաղասիրությունը չլիներ, ամենայն հավանականությամբ բուրժուազիան մեզ հետ արդեն պատերազմելիս կլիներ, վորովհետև վերջին տարիների ընթացքում բուրժուական պետությունները, հատկապես Մեզիկան, միջանի անգամ պատերազմի լուրջ վտանգի առաջ կանգնեցրին մեզ: Միայն խորհրդային իշխանության հեղափոխական համբերությունը և անչափ խաղաղասիրությունն էր, վոր հարկադրեց անգլիական ավազակներին իրենց մտադրություններից հրաժարվել:

Բուրժուազիայի դիմակը խորհրդային իշխանությունը պատռեց Ջենովայում 1922 թվին, վորտեղ ընկ. Չիչերինը միակն էր, վոր զինաթափման առաջարկն արավ ի լուր ամբողջ աշխարհի: Բուրժուազիան այդպիսի համարձակություն չեր սպասում հեղափոխական խորհուրդների յերկրից, նա շփոթվեց, բայց միևնույն ժամանակ զինաթափման խնդիրը հանեց որակարգից: Վոչ միայն հանեց որակարգից, այլև այսօր բացարձակ զինվում է ավելի, քան յերբևիցե:

Սակայն մեր Միությունը, չնայած բուրժուազիայի այդպիսի դերքին, իր խոսքի տերը

մնաց: Իր խաղաղասիրությունը նա ապացուցեց նրանով, վոր հերոսական կարմիր բանակը զորացրման յենթարկեց, թողնելով սահմանների պաշտպանության համար անհրաժեշտ 600,000-նոց կարմիր բանակ: Միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ իրենց պարտքը հեղափոխության առաջ կատարելուց հետո վերադարձան իրենց գործարանները, իրենց գյուղերը, զենքի փոխարեն առնելով իրենց ձեռքը մուրճը և մանգաղը:

Դժբախտաբար զինված և կատաղած թըշնամիների դիմաց ամբողջ բանակը զորացրել մենք չեյինք կարող: Այնտեղ, վորտեղ հեղափոխության պաշտպանության խնդիրն է դրված, միամտություն և անուղղելի հանցանք կլիներ չզինաթափվող թշնամիների դիմաց զինաթափվել: Խորհրդային իշխանությունը բանակը պահում է և հարկադրված է պահել բացարձակապես պաշտպանության նպատակների համար:

Ճիշտ է, մենք բուրժուազիայի նման բարձր զարգացած տեխնիկա չունենք, մենք նրա պես հարուստ և պարճենկոտ չենք: Սակայն անսահման հեղափոխական ուժ ենք զգում մեր մեջ — մեր յերկրի բանվորների և գյուղացիների հեղափոխական կազմակերպվածությունը և հեղափոխության համար անտրտուն մեռնելու պատրաստակամությունը այն ցրտափայտներն են, վոր հիմք

1-22499



են ծառայում մեր յերկրի պաշտպանության զոր-
ծի հաջողությանը: Այժմ ուշադրության կեն-
տրոնն ստեղծագործական աշխատանքն է, ար-
դյունաբերությունը, գյուղատնտեսությունը: Նոր-
հրդային իշխանության հարկադրյալ ռազմական
շինարարությունն այնպես պիտի ընթանա, վոր
տնտեսական շինարարությունը, յերկրի արտա-
դրական ուժերի զարգացումը միանգամայն ա-
պահովված լինի, իսկ մյուս կողմից յերկիրն ամ-
բողջապես յերաշխավորված լինի արտաքին հա-
կահեղափոխական վորևե հարձակումից:

Այն հարցը, թե ինչպես կառուցել հեղա-
փոխության զինված ուժերը, մեր կուսակցու-
թյունը վաղուց է զբաղեցրել: Դեռ յերկրորդ հա-
մագումարում 1903 թվին, վորտեղ ընդունվեց
կուսակցության ծրագիրը, ասված եր. «Կուսա-
կցությունն իրեն մոտակա քաղաքական խնդիր է
առաջադրում մշտական զորքը փոխարինել ժո-
ղովրդի ընդհանուր զինավորումով»:

Յերկու խոսքով պարզենք «մշտական զորք»
և «ժողովրդի ընդհանուր զինավորում» հասկա-
ցողությունները:

Սովորաբար բանակները հիմնական յերկու
կառուցվածք ունեն—կամ նրանք միշտ հավաք-
ված ու պատրաստ են պատերազմի համար կամ
թե միայն պատերազմի ժամանակ են հավաքվում:

Այն բանակը, վորի կազմը պատրաստ ու
հավաքված է թե խաղաղ, թե պատերազմի ժա-
մանակ, կոչվում է մշտական բանակ, իսկ միայն
պատերազմի ժամանակ հավաքվող բանակը «ժո-
ղովրդի ընդհանուր զինավորում» կամ միլիցիոն
բանակն է:

Մշտական բանակները լինում են յերկու
տեսակի՝ կամավոր վարձկան, վորը լրացվում է
կամավոր մարտիկներով, ռոճիկով ծառայողնե-
րով. այդպիսի բանակ ունեւ մինչև պատերազմի
Անգլիան, և կադրային մշտական բանակ, վորը
լրացվում է ընդհանուր պարտադիր զինվորա-
կան ծառայության որեքի կարգով:

Պետությունների մեծ մասն այժմ կադրային
մշտական բանակ է պահում: Կադրային բանակն
ամեն տարի զինակոչի ժամանակ խաղաղ արտա-
դրությունից, տնից ու տեղից կտրում է վորոշ
թվով զինակոչային հասակ ունեցող յերիտասար-
դություն: Այսնոր զինակոչայիններին մշտական
բանակում խաղաղ ժամանակ սովորեցնելը բավա-
կան ժամանակ է պահանջում—յերկուսից մինչև
յերեք տարի—և այս ուսուցման շրջանն ավար-
տելուց հետո մշտական բանակը դուրս է թողնում
արդեն պատրաստի մարտիկներ և նրանցով լրաց-
նում է այսպես կոչված պահեստի զորքը, վորը նո-
րից կանչվում է միայն պատերազմական ժամանակ:

Մշտական կադրային բանակը, վորպես միշտ հավաքված և մարզված բանակ, մեծ առավելություններ ունի, և այդ ե պատճառը, վոր այդ ձևն այժմ ամենատարածվածն է:

Սակայն առավելության հետ միասին նա ունի և խոշոր պակասություններ: Նախ նա շատ թանգ է նստում, իսկ յերկրորդը, վոր ամենագլխավորն է, խաղաղ ժամանակ, խաղաղ աշխատանքից յերկար ժամանակով շատ մարդ է կրտրում—մի բան, վոր այնքան ել ձեռնտու է ժողովրդական տնտեսության ու աշխատավորության համար:


Այլ բան է միլիցիոն բանակը կամ միլիցիան: Միլիցիոն բանակի կամ միլիցիայի անվան տակ հասկանում են այնպիսի բանակ, վորը խաղաղ ժամանակ իր շարքերում ունի միայն աննշան քանակությամբ ղեկավար հրամանատարական կադր: Զինվորական ծառայողների մնացած ճնշող մասն զբաղված է իր խաղաղ աշխատանքով և միայն ժամանակ առ ժամանակ հավաքվում է զինվորական պատրաստություն ստանալու համար: Միլիցիոն սիստեմի ժամանակ գոյություն ունի զինվորական պարտադիր ծառայությունը, և գործն այնպես է դրված լինում, վոր զորքերի մարտական պատրաստությունը, վորքան կարելի յե, մշտական կադրային բանակների

մարտական պատրաստության մոտ լինի: Միլիցիոն բանակի միջոցով հնարավոր է ամբողջ բնակչությունը զինել, սովորեցնել և դարձնել զենք կրելու ընդունակ:

Շվեյցարիան և Շվեդիան ունեն միլիցիոն բանակներ: Իսպերիալիստական պատերազմի նախորդակին Շվեյցարիայի զենք կրելու ընդունակ քաղաքացիների 41⁰/₀-ը—ուրեմն հարյուրից 41-ը—մարտական ծառայության պատրաստություն ունեն, իսկ Շվեդիայինը՝ 33⁰/₀-ը—հարյուրին 33 հոգի, այնինչ ցարական Ռուսաստանն ունեն միայն 13⁰/₀-ը, իսկ Ֆրանսիան՝ 27⁰/₀-ը: Այդ շատ պարզ յերևում է № 2 դիագրամայից (տես մյուս յերես):

Միլիցիայի զինվորը սովորում է պարբերաբար—նա ռազմական գործը կապում է խաղաղ աշխատանքի հետ: Մինչև պատերազմ սկսվելը մնալով տանը, նա պետությունից իր ապրուստի համար ծախս չի պահանջում: Պետությունից ստացած զենքը, զգեստը նա պահում է իր մոտ: Միլիցիոն սիստեմի ժամանակ ծառայության մեջ են համարվում բոլոր զենքի ընդունակները: Միլիցիոն սիստեմն ունի մի մեծ պակասություն—այդ այն է, վոր նրա ամբողջ կազմը վերջին հաշվով ավելի թույլ է պատրաստված, քան մշտական բանակի կազմը:

ՊԱՏԱՐԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԴԱՏԱՆԵՐԻ ՔԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Պատմութիւնը ցույց ե տալիս, վոր բանակ-
ների այս կամ այն ձեռք մեծապէս պայմանա-
վորված ե յերկրների և պետութիւնների քա-
ղաքական ու տնտեսական դրութեամբ և նպատակ-
ներով: Բանակը դասակարգային կազմակերպու-
թիւն ե: Տիրող դասակարգը միշտ աշխատել ե
իր բանակին այնպիսի կառուցվածք տալ, վոր
լավագոյն կերպով ապահոված լինի իր դասա-
կարգային շահերի պաշտպանութիւնը:

Յեւ յերբ այսօր մենք խոսում ենք մշտա-
կան կամ միլիցիոն բանակ ունենալու մասին,
մենք պարտավոր ենք հաշիւի առնել բոլոր հան-
գամանքները:

Մեր Միութեան միջազգային դրութիւնն
ապահովված չե: Մենք չըջապատված ենք: Մեր
խաղաղութիւնը ժամանակավոր ե: Մենք պետք
ե ունենանք այնպիսի մի բանակ, վոր ընդու-
նակ լինի պաշտպանել մեր սահմանները: Այդ-
պիսի խնդիրը լուծել ընդունակ ե միայն ուժեղ
մշտական կազմային բանակը:

Մեր ներքին դրութիւնն անհամեմատ ա-
վելի նպաստավոր ե—յերկրի բնակչութեան $\frac{3}{4}$ -ից
ավելին բանվորներ են և գյուղացիներ, վորոնք
ամբողջապէս կլանված են մեր սոցիալիստական
Միութեան տնտեսութեան շինարարութեան գոր-
ծով: Սակայն մեր դժբախտութիւնը մեր տնտե-

սակաւն յեւ կուտորակաւն հետամնացութիւնն եւ Այս յերկու հանգամանքները վճռական նշանակութիւն ունեն միլիցիոն բանակ կազմակերպելու խնդրում:

Միլիցիոն սիստեմի համար նպաստավոր և աննպաստ պայմանների քննութիւնը հետեյալ յեզրակացութիւններին ե բերում.

1. Արտաքին դրութիւնը հարկադրում ե ունենալ ուժեղ կադրային բանակ,

2. Յերկրի աղքատութիւնն ստիպում ե գործադրել միլիցիոն սիստեմը:

Այս յերկու հանգամանքները վերջին հաշվով վճռեցին մեր զինված ուժի կառուցման ձևի դժվար խնդիրը:

Մինչև 1923 թիւը մեր կարմիր բանակն ամբողջապէս կադրային եր: Այժմ նա ունի խառը կազմ—նա կազմված ե և՛ մշտական կադրային և՛ միլիցիոն զորամասերից:

Մեր միլիցիոն զորամասերը կոչվում են յերկրային զորամասեր: Յերկրային զորամասերն իսկական միլիցիոն զորամասեր չեն: Նրանք ընդհանուր շատ գծեր ունեն միլիցիոն սիստեմի հետ, իսկ միևնույն ժամանակ շատ մոտ են և կադրային զորամասերին: Մեր յերկրային զորամասերն այսպէս ասած խորհրդայնացրած միլիցիոն սիստեմին են պատկանում: Մենք վերցրել ենք հիմնա-

կան սկզբունքը և հարմարեցրել մեր Միութեան պայմաններին:

Մեր յերկրային զորամասերը միլիցիոն սիստեմից տարբերող հիմնական գծերը հետեյալներն են՝

1—Մեր յերկրային զորամասերի կադրը համատարաբար մեծ ե, համարյա կադրային զորամասի չափ, յեթե այնտեղ չհաշվենք մարտիկներին:

2—Համատարաբար յերկար ե ուսուցման շրջանը, մի բան, վոր պայմանավորվում ե մեր անկուտորակաւնութեամբ:

3—Ծառայութեան են հրավիրվում վոչ թե բոլոր զենքի ընդունակ քաղաքացիները, այլ վորոշ հասակ ունեցողները:

4—Յերկրային զորամասերը պատրաստում են պահեստի զորք, այնինչ միլիցիոն սիստեմի ժամանակ պահեստի զորք չկա:

Այս սկզբունքներով կազմակերպված յերկրային զորամասերը բռնում են կադրային և միլիցիոն զորամասերի միջին տեղը:

Հարմիր բանակի այսպիսի յուրահատուկ ձևով կազմակերպված լինելն ապահովում ե մեր Միութեան պաշտպանութիւնը: Մեր ընտրած ձևը — բացարձակապէս հեղափոխական ստեղծագործութիւն ե, և նրա հաջողութիւնը մեծապէս

պայմանավորված ե այն լայն աջակցութեամբ,
վորը պիտի ցույց տան բոլոր բանվորները և գյու-
ղացիները:

Մենք լուրջ կերպով անցել ենք յերկրային
գործառնների շինարարութեանը, վորի որինակը
մինչև այդ պատմութեան մեջ չի յեղել:

Մեր յերկրային շինարարութեանը կախված
ե Միխայիլ Վասիլևիչ Ֆրունզեյի անմոռանալի
անվան հետ:

Այդ աշխատանքի վրա ընկ. Ֆրունզեն հա-
տուկ ուշադրութեան եր դարձնում, յերկրային
գործառնների կազմակերպումը փաստորեն սկըս-
վեց այն ժամանակ, յերբ նա Միութեան Ռազ-
մա-Հեղափոխական Կոմիտեյի հախագահի տեղա-
կալ և ապա հախագահ դարձավ: Յերկրային շի-
նարարութեան իրագործումով ընկ. Ֆրունզեն կա-
տարեց Կ. Կուսակցութեան ծրագրի կարևոր կե-
տերից մեկը:

III

Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին
իսկ օրերից ծագած քաղաքացիական կռիվը հար-
կադրեց խորհրդային իշխանութեան կազմակեր-
պել մշտական, կանոնավոր և մեծ Կարմիր բա-
նակ: Քաղաքացիական կռիվի ժամանակ Կարմիր
բանակը գործող բանակ եր, նա կռվում եր բան-
վորի գործարանի, գյուղացու հողի համար, նա
շախջախում եր իր բազմաթիվ հակահեղափոխա-
կան թշնամիներին:

Հենց այդ ժամանակ խորհրդային իշխանու-
թեանը, կառուցելով մշտական հեղափոխական
բանակ, ձեռնարկում ե բանվորների և գյուղա-
ցիների ընդհանուր զինվորական պատրաստութեան
գործի կազմակերպմանը: 1918 թվի փետրվարի
23-ին լույս ե տեսնում Կարմիր բանակ կազմա-
կերպելու դեկրետը, իսկ ապրիլի 22-ին՝ ընդհա-
նուր զինվորական պատրաստութեան պարապ-
մունքներ սահմանող դեկրետը: Կատաղի կռիվի
պայմաններում սկսվում են այսպես ասած մինչ-
զինակոչային պատրաստութեան պարապմունքնե-
րը բոլոր յերիտասարդ բանվորների ու գյուղա-
ցիների հետ: Այս պարապմունքներն ամենայն

իբրավամբ մենք կարող ենք մեր այժմյան կարմիր
յերկրային զորամասերի բողբոջները համարել:

Բավական եր, վոր 1920 թվի գարնանը քա-
ղաքացիական կռիվը դադարեր, վորպեսզի կու-
սակցության IX-րդ համագումարը քննության
առնեւ մեր զինված ուժերի կառուցման սկզբունք-
ների խնդիրը: Համագումարը հանգամանորեն
քննելով խնդիրը՝ վորոշում ե կայացնում աստի-
ճանաբար անցնել յերկրային սիստեմին: Դժբախ-
տաբար վերահաս լեհական պատերազմը և Վրան-
գելի գործողություններն ուշացրին այդ վորոշ-
ման իրագործումը մինչև 1923 թիվը:

Այդ ժամանակ բանակը զորացրված եր և
կրճատված: Յերկիրը խաղաղ եր: Կենտրոնական
Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսսար-
ների Խորհուրդն ոգոստոսի 8-ին հրատարակում
են յերկրային զինվորիկներ կազմակերպելու դեկ-
րետը, վորն որինական հիմք ե դնում լայն յեր-
կրային շինարարության: Դեկրետը տալով մեր
Միության արտաքին և ներքին կացության զնա-
հատականը՝ խնդիր ե դնում արտադրողական
աշխատանքով զբաղվող բանվորներից և գյուղա-
ցիներից ժամանակավոր հավաքույթների միջո-
ցով պատրաստել հեղափոխական մարտիկներ,
վորոնք հարկավոր ըուպելին ընդունակ լինեն գուրս
գալ և պաշտպանել Խորհրդային Միությունը:

Յերկրային զորամասերն առաջին հերթին
մարտական զորամասեր են: Կադրային զորամա-
սերի հետ միասին նրանք հավասարապես պա-
տասխանատու յեն խորհրդային իշխանության
առաջ: Նրանք ել պետք ե մարտական տեսակե-
տից կատարելապես պատրաստ լինեն:

Փորձի կատարյալ բացակայությունը հարկա-
դրում ե մեծ զգուշությամբ ձեռնարկել յերկրա-
յին զորամասերի շինարարությանը: Կարելի յե
ասել, վոր 1923 թիվը փաստորեն զգուշ փորձե-
րի ու լուրջ ուսումնասիրության տարի յեր: Ան-
հրաժեշտ եր փորձով ստուգել այնպիսի մի կա-
րկոր խնդիր, ինչպիսին ե յերկրային զորամա-
սերի մշտական հրամանատարական, քաղաքա-
կան, վարչական և կարմիր-բանակային կադրի,
փոփոխական կազմի, վարժական կայանների,
մարտական պատրաստություն ստանալու համար
անհրաժեշտ ծրագրերի և վիրջապես, ուսման
ու ծառայության ժամանակի խնդիրները: Չպետք
ե ծածկել, վոր դեպի յերկրային զորամասերի
սիստեմը մեր շարքերում կային տարածայնու-
թյուններ, առարկություններ և վորոշ հոռետե-
սություն:

Ինքնին հարցը չափազանց լուրջ եր, վորքան
վոր խորհրդային իշխանությունը կանգնած եր
այն հարցի առաջ, թե արդյոք յերկրային սիստեմը

մտցնելով մենք չէ՞նք թուլացնում մեր Միության պաշտպանողական ընդունակութիւնը: Այս հարցի մասին հարկավոր եր մտածել, տասը չափել՝ մեկ կտրել: Այստեղ ամենադժվար խնդիրն այն է, թե ինչպես անել, վորպէսզի մի կողմից զինապարտքադաքացիներին զինվորական լրիվ պատրաստութիւն տրվի, իսկ մյուս կողմից նա արտադրութիւնից չկտրվի: Ահա այդ հարցը խորհրդային իշխանութիւնը լուծեց:

Մեր յերկրային զորամասերի շինարարութիւնն ընդգրկում է յերեք շրջան. 1—յերկրային զորամասերը, 2—մինչգինակոչային պատրաստութիւնը և 3—ռազմական գործի տարածումը մեր հեղափոխական սիստեմի մեջ քաղաքացիական դպրոցների, արհեստակցական միութիւնների և Կոմյերիտմիության միջոցով:

Յերկրային զորամասերի մեջ ամենամեծ միավորը յերկրային զիվիզիան է: Յերկրային զիվիզիաներն ունեն իրենց տեղավորման շրջանները, վորոնց սահմաններն աշխատում են հարմարեցնել վարչական սահմաններին: Այսպէս, որինակ, զիվիզիան տեղավորվում է մեկ նահանգում: Յերկրային զիվիզիայի տեղավորումը կախված է տվյալ վայրի բնակչութեան խտութիւնից: Կարող է պատահել, վոր մեկ զիվիզիա տեղավորվի նաև յերկու-յերեք նահանգներում:

Դիվիզիայի տեղավորման շրջանն այնուհետև ընդգծում է և յերկրային գնդերի շրջանները, իսկ վերջինները սահմանում են գումարտակների, վաշտերի և նույնիսկ դասակների շրջանները: Շրջանների բաժանելու խնդիրը շատ կարևոր է, վորովհետև հաստատել մարտական այնպիսի միավորներ, ինչպիսին են գումարտակը, վաշտը, մեծ նշանակութիւն ունի յերկրային զորամասերի ռազմունակութեան տեսակետից: Սովորաբար վաշտի շրջանը գյուղն է, իսկ յեթե նա փոքր է, ապա յերկու-յերեք գյուղը: Միջանի գյուղեր միասին կազմում են գումարտակի շրջանը—սովորաբար դա լինում է գավառակը. իսկ գավառը գնդի շրջանն է: Յեթե յերկրային զորամասերի տեղավորման շրջանում կա գործարան, ապա կարող է պատահել, վոր հենց նույն այդ գործարանը լինի վաշտի կամ նույնիսկ գումարտակի շրջան:

Յերկրային զորամասերի լրացումը կատարվում է հետևյալ կարգով: Նախ բոլորն իրենց ծառայութիւնը տանում են ընդհանուր և պարտադիր ծառայութեան որենքի կարգով: Զորամասերի մշտական կազմը տեղավորված է ըստ շրջանների: Այսպէս, որինակ, գնդի պետը և զինկոմը շտաբով ու աշխատակիցներով գնդի շրջանի կենտրոնումն են, գումարտակապետը՝ գու-

մարտակի, և այլն: Մշտական կազմը կարող ե
տվյալ յերկրային գործածասի վայրից չլինել: Նա
նշանակվում ե բարձրից և իր աշխատանքը տա-
նում ե նախատեսված կարգով: Յերկրային գո-
րածասի մշտական կազմն ամբողջ մարտիկներին
և հրամանատարներին թվի $1/10$ մասն ե:

Ինչ վերաբերում ե փոփոխական կազմին—
նա ամբողջապես տեղական ե և կազմում ե գո-
րածասի մնացած $9/10$ մասը: Զինապարտ բոլոր
քաղաքացիներն ընդունվելով յերկային գորա-
մաս, համարվում են իսկական զինվորական ծա-
ռայության մեջ և իրենց ծառայությունը տա-
նում են իրենց ապրուստի ու աշխատանքի վայ-
րում: Մեկ գյուղի կամ մեկ գործարանի յեր-
կրային—այդպես են կոչվում յերկրային գորա-
մասում ծառայող շարքային մարտիկները ու
բոլորն ել մտնում են մեկ վաշտի մեջ: Յերկրա-
յին գորամասում ծառայելու ժամանակը սահ-
մանված ե հինգ տարի:

Այս հինգ տարվա ընթացքում յերկրային
ծառայությունը հետևյալ կերպով ե դասավորվում:
Առաջին տարին նա ծառայում ե յերեք ամիս,
յերկրորդ տարին յերկու ամիս, իսկ հետևյալ
յերեք տարիների ընթացքում յուրաքանչյուր տա-
րի մեկ ամիս: (Նայիր № 3 դիագրամման գրքի
վերջում):

Զինակոչվելով հոկտեմբեր ամսին—ընդհա-
նուր զինակոչի ժամանակ, կանչվող յերկտասարդը
հաշվի յե առնվում յերկրային գնդի ցուցակի մեջ
և գնում ե տուն: Ցուցակի մեջ մտնելու որից
նա համարվում ե զինվորական ծառայության մեջ:
Մայիսին նոր զինակոչայինները կանչվում են,
հավաքվում են և յերեք ամսվա ընթացքում կա-
տարում են իրենց ծառայությունը: Այդ առաջին
յերեք ամսվա ընթացքում նրանք ապրում են
գորանոցում և ձեռք են բերում նոր-զինակո-
չային պատրաստությունը: Յերեք ամիս հետո
յերկրայինը գնում ե տուն: Նորից նա գալիս ե
գորամաս մեկ տարուց հետո և ծառայում ե յեր-
կու ամիս—ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին:
Իր ծառայության յերկրորդ տարվա այս յերկու
ամիսը յերկրայինը նույնպես ապրում ե գորա-
նոցային կյանքով: Հետագա յերեք տարին նա
գալիս ե ծառայելու ամեն տարի միայն մեկ ա-
միս—սեպտեմբեր ամսին: Սեպտեմբերը յերկրա-
յին գորամասերի ընդհանուր հավաքույթների
ամիսն ե: Այդ ժամանակ հավաքված են լինում
բոլոր յերկրայինները, բացառությամբ նոր-զի-
նակոչայինների: Բացի այդ, յերկրայինը 2, 3, 4,
և 5 տարիների ընթացքում յոթ որվա կարճատև
հավաքների յե կանչվում ձմեռային շրջանում:
Այդ յոթ ուրը դասավորվում են ըստ ամիսների

այնպես, վոր յերկրայինը կրկնողական պարապմունքներ յե գալիս մեկ կամ յերկու որով: Այդ հավաքները տեղի յեն ունենում վարժական կայաններում: (Այդ հավաքները դիագրամմայի մեջ ցույց են տված հունվար ամսի սյունյակում):

Հիմնականում յերկրայինի մարտական պատրաստութիւնը կատարվում է վարժական կայաններում՝ հավաքների ժամանակ և հավաքների միջև:

Այդ հավաքների ժամանակ յերկրայինը սահմանված ժամանակով թողնում է իր տունը, գալիս է գորանոց, կանոնավոր ու ծրագրված կարգով կատարում է իր ծառայութիւնը վորպես կարմիր-բանակային: Այդ հավաքների ժամանակ նա ստանում է զինվորական զգեստ, ուտելիք և զենք:

Հավաքները լինում են մասնավոր և ընդհանուր: Մասնավոր հավաքները կազմակերպվում են դասակի, վաշտի կամ գումարտակի մասշտաբով, իսկ ընդհանուր հավաքները՝ գնդի և դիվիզիայի մասշտաբով:

Հավաքների ժամանակ մշտական կազմը ծավալում է ռազմական և քաղաքական լայն աշխատանք: Մինչ այդ, նա կատարում է մեծ նախապատրաստական կազմակերպչական աշխատանք այն հաշվով, վոր յերկրայինի գալուն պես

ապահովված լինի ծրագրված աշխատանքը: Հավաքների ժամանակ յերկրայինի հետ տանում են ռազմական ու քաղաքական պարապմունքներ: Ռազմական պարապմունքները բաղկացած են կանոնադրքերի ուսումնասիրութիւն, շարքային-դաշտային և հրաձգային պարապմունքներից: Յերկրայինն ընտելանում է զինվորական կյանքին ու սովորում մարտական ծառայութիւն կանոնները, մարտական շարքը, կովելու ձևերը և ուսումնասիրում է հրացանը, գնդացիրը ու հրաձիգ դառնում: Քաղաքական պարապմունքները նախ և առաջ նպատակ են դնում վերացնել նրատարրական անգրագիտութիւնը—յերկրայինին գրել-կարդալ են սովորեցնում, ապա հենց այդ միջոցին քաղաքական պատրաստութիւն են տալիս: Հավաքների ժամանակ շատ լայն կերպով աշխատում են ակումբը և լենինյան անկյունները:

Կուսակցական ընկերները կազմակերպում են բջիջ, իսկ կոմյերիտականները կազմում են խմբակներ: Կանոնավոր կերպով ընթանում են կուսութեամբութիւն պարապմունքները: Մի խոսքով՝ այն բոլոր աշխատանքը, վոր կատարվում է կադրային գործամասում, նույն կարգով կատարվում է և յերկրային գործամասում հավաքի ժամանակ:

Բայց հավաքը վերջացավ թե չե, յերկրայինն ստանում ե իր շորերը, թղթերը և վերագառնում ե իր գյուղը կամ գործարանը: Նա իր պարտականութունը կատարեց ու գնաց իր սովորական աշխատանքին: Համարվելով զինվորական ծառայության մեջ, նա բոլորովին ազատ ե: Այդ ժամանակամիջոցին յեթե նա ուզենա, կարող ե իրեն միջոցներով զինվորական զգեստ պատրաստել և հագնել: Հավաքներից դուրս յեթե յերկրայինն ուզում ե վորեւ տեղ գնալ, այսինքն հեռանալ իր վաշտի, գումարտակի կամ գնդի շրջանից մեկ ամսից ավելի ժամանակով, նա պարտավոր ե իր համապատասխան պետից թույլտվութիւն խնդրել:

Հետագա տարիների հավաքների ժամանակ յերկրայինը լրացնում ե իր սովորածը և չորս տարուց հետո վերջացնում ե իր ծառայութիւնը: Ծառայութիւնը տանում ե հեշտ և աննկատելի և իր և բանվորա-գյուղացիական իշխանության ոգտին:

Յերկրային զորամասում միաժամանակ ծառայում են չորս հասակ: Յեթե միաժամանակ միայն մեկ հասակ ծառայեր, այդ դեպքում լրացման շրջանները պետք ե չորս անգամ ավելի ընդարձակ լինէին: Դա առաջ կբերեր դասակների, վաշտերի և գումարտակների ցրվածութիւն—մի-

բան, վոր հափազանց կոժվարացներ զեկավարութիւնը և կզրկեր զորամասն անհրաժեշտ ճկունութիւնից պատերազմի ժամանակ:

Յերկրային զորամասերի լրացման կարգը ցույց ե տրված № 4 դիագրամայի (սխեմայի) մեջ (գրքի վերջում): Սխեմայի վրա ցույց ե տրված յերկրային գնդի փոփոխական կազմի տարեկան շարժումը, առանձնապես սև գծերով ցույց ե տրված, թե ինչ կարգով ե կատարում 1903 թվին ծնված յերկրայինը իր ծառայութիւնը հինգ տարվա ընթացքում: Նույն տեղում ցույց են տրված ծառայող ուրիշ հասակները:

Ինչպես ցույց ե տված սխեմայում, 1903 թ. նորակոչն առաջին տարին անցնում ե 3-ամսյա զորանոցային պատրաստութիւնը, իսկ այդ ժամանակ ծառայում են չորս հասակ՝ 1902, 1901, 1900 և 1899 թվին ծնվածները: 1903 թվի ծառայության գալու հետևանքով 1899 թիվն իր ծառայութիւնը ավարտում ե:

Հետևյալ տարին կանչվում ե 1904 թիվը, ազատվում ե 1900 թիվը, իսկ 1903 թիվը մասնակցում ե ընդհանուր հավաքներին յերկու ամսվա ընթացքում և շաբաթական հավաքին ձմեռվա ընթացքում: 1930 թվին 1903 թիվն ավարտում ե իր ծառայութիւնը, իսկ ծառայության ե կանչվում 1907 թիվը: Սխեման շատ պարզ կերպով

տալիս ե յերկրայինի տարեկան շարժումը և այդ պատճառով անհրաժեշտ ելավ ուսումնասիրել այն:

Մենք ասացինք արդեն, վոր աշխատանքը յերկրային գորամասում յերկու հիմնական մասերից ե բաղկացած: Հավաքներից հետո յերկրայինների յետևից մշտական կազմն ել ցրվում ե իր կենտրոնները կամ այսպես կոչված վարժական կայանները: Այստեղ սկսվում ե ամենադժվար ու պատասխանատու աշխատանքը: Մինչև նոր հավաքը հրամանատարական և քաղաքական կազմը շարունակ պահպանում են իրենց կապը յերկրայինի հետ: Յեթե հավաքների ժամանակ յերկրայինն ե գալիս իր հրամկազմի ու քաղկազմի մոտ, ապա հավաքների միջոցին հրամքաղկազմն ե գնում յերկրայինի մոտ: Սկսվում ե յերկրայինի դանդաղ, յերկար ու ծանր ռազմա-քաղաքական վերամշակումը, վոր յերկու հիմնական նպատակ ե դնում իր առաջ. — մեկը գերազանցապես դաստիարակչական ե և յերկրայինի համար պարզաբանում ե զինվորական ծառայության նշանակութունը և դրա հետ միասին նրան մարտական պատրաստության վոգի յե ներշնչում, իսկ յերկրորդը շարունակ կենդանի յե պահում նրա մեջ հետաքրքրութունը և սերը դեպի ռազմա-քաղաքական ուսումը: Այդ աշխատանքը վերին աստիճանի մեծ նշանակութուն ունի կըր-

թական ու դաստիարակչական սիստեմի մեջ և նա ամբողջ ծանրությամբ ընկնում ե մեկ կողմից մշտական հրամանատարական ու քաղաքական կազմի վրա, իսկ մյուս կողմից՝ մեր կուսակցական, խորհրդային, կոմյերիտական, քաղլուսվարական և այլ հասարակական կազմակերպությունների վրա: Այստեղ արդեն ամբողջ հասկով մեր առաջ կանգնում ե ռազմական պրոպագանդայի խնդիրը, և ինքնին հասկանալի յե, վոր նրա հաջողությունն ամբողջապես կախված ե այն ակտիվությունից, ձեռներեցությունից ու աշխատանքից, վորը կկատարեն մեր կազմակերպությունները:

Յերկրի պաշտպանության գործը դադարում ե միայն զինվորականների խնդիրը լինելուց, նա գերազանցապես դառնում ե համապետական մի խնդիր, վորը լուծումը հնարավոր ե միայն բոլոր բանվորների ու գյուղացիների և առաջին հերթին տեղական քաղաքական, կուլտուրական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ:

Խորհրդային իշխանության բոլոր ցանկությունները՝ թեթևացնել զինվորական ծառայության պայմանները բանվորների և գյուղացիների համար, վերջիվերջո հանդիպում են ժամանակի կտրուկ պահանջին—ունենալ, ինչ գնով ուզում ե լինի, լայն կերպով ռազմականապես և քաղաքականապես միանգամայն պատրաստ բանակ։

Վերջին ժամանակներս զինվորական գործը հիմնովին բարդացել է, զինվորական տեխնիկան զարգացել է, կռվի ձևերը փոխվել են։ Քանի վոր մեր կարմիր զորքերը մենք պատերազմի համար ենք պատրաստում, ապա բնական է, վոր մարտիկների պատրաստությունը պետք է միանգամայն համապատասխանի ապագա անխուսափելի և անխուսափելիության չափ կատաղի պատերազմի պահանջին, վորի ժամանակ մեր բոլոր բանվորների և գյուղացիների առաջ դրվելու յե կենինի պատմական դարձվածքը—«ով ում», «ով ում» պետք է հաղթի—կապիտալիստները մեզ, ուրեմն նորից միջանի տասնյակ տարիների համար շահագործողների ծանր լուծ, թե մենք կապիտա-

լիստներին, ուրեմն հեղափոխության կատարյալ հաղթանակ, բանվորների և գյուղացիների ազատ սոցիալիստական կյանք։ Մեր բարձրացրած հեղափոխական պայքարի դրոշակը պահանջում է ամեն գնով յերկրորդն անել, ջախջախել կապիտալը, վոսնատակ տալ շահագործողներին, տանել հեղափոխությունը մինչև վերջնական հաղթանակ։ Այլ կերպ մտածող մեր յերկրում չպետք է լինի։ Մենք պետք է պատրաստվենք հաղթելու համար։ Այսոր լինելով միայն պաշտպանվող, վաղը մեզ վրա հարձակվող իմպերիալիստական թշնամու դիմաց մենք պետք է լինենք անպայման հաղթող։

Դրա համար յերբեք չպետք է ժողանալ, վոր մեր Միությունը մի պաշարված սոցիալիստական ամրոց է, մենք մեր բոլոր ուժերով պետք է նվիրվենք յերկրի պաշտպանության գործին։ Պետք է ուժեղացնել բանակը, պետք է սովորեցնել մարտիկներին, պետք է լավ վարժեցնել ու դաստիարակել նրանց։

Խորհրդային իշխանության սահմանած որենքով այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում բանվորն ու գյուղացին սովորում են ու ծառայում բանակում, — միևնույն է, մշտական թե յերկրային զորամասերում, — հնարավորություն չի տալիս անցնել մարտական պատրաստության

պահանջվող ծրագիրը: Այդ ժամանակը—յերկու տարի մշտական զորամասերում և ութ ամիս հինգ տարվա ընթացքում յերկրային զորամասերում—քիչ է, իսկ ավելացնել ել չի կարելի, վորովհետև դա առաջին հերթին կանդրադառնա մեր Միության արտադրական ուժերի վրա, մեր տնտեսության վրա:

Որհրդային իշխանությունը դրա յեկեք գտել է այսպես կոչված մինչդինակոչային պատրաստության մեջ և նախամինչդինակոչային, լայն ռազմական պրոպագանդայի հետ միասին բոլոր բանվորների, գյուղացիների ու նրանց զավակների մեջ:

Այս աշխատանքը, ցույց տված յեկեք վերին աստիճանի լուրջ խնդիր է, և համարձակ կալելի յե ասել, վոր մեր ամբողջ կարմիր բանակի ռազմունակությունը, իսկ դանշանակում է մեր յերկրի պաշտպանողական ունակությունը խոշոր չափով պայմանավորված է մինչդինակոչային, նախամինչդինակոչային և ռազմական դործի պրոպագանդայի կանոնավոր ու հաջող կազմակերպումով և իրագործումով:

Մինչդինակոչային պատրաստությունը նպատակ ունի տալ բանվորա-գյուղացիական յերիտասարդությանը նախնական ռազմական պատրաստություն, վորը հիմք կծառայի արդեն հե-

տագայում կարմիր բանակում աշխատելու:

Մինչդինակոչային պատրաստությունն իսկական ծառայության ժամանակ տրվող պատրաստության հետ մի ամբողջական ծրագիր է կազմում: Այստեղից արդեն պարզ պետք է լինի, վոր յեթե մինչդինակոչային պատրաստության մեջ վորևէ բան թերի յեն անցնում—դա արդեն անդրադառնում է մարտական ամբողջ պատրաստության վրա:

Մինչդինակոչային ամբողջ կազմը ինչ գնով էլ լինի, անհրաժեշտ է ընդգրկել: Մինչդինակոչային պատրաստությունն անցնում են 19 և 20 տարեկան հասակ ունեցող յերիտասարդ բանվորներն ու գյուղացիները յերկու տարվա ընթացքում: Ամբողջ պատրաստությունը տևում է մոտ 300 ժամ և տարվում է վարժական կայաններում յերկրային կամ կազրային զորամասերի հրամանատարների միջոցով: Այս ժամերի ընթացքում մինչդինակոչայինը սովորում է այն բոլորը, ինչ վոր պիտի գիտենա առանձին մարտիկը ջոկի* գործողությունների ժամանակ: Ըստ որենքի քաղաքի մինչդինակոչային յերիտասարդությունը պարապում է ծառայությունից և աշխատան-

* Ջոկը—մարտական առաջին միավորն է. նա բաղկացած է լինում վոչ ավելի, քան տաս մարտիկներից: Միքանի ջոկեր կազմում են դասակը և այլն:

քից ազատ ժամերին, վաղ առավոտյան կամ ճաշից հետո, իսկ յերբեմն միջօրեյին. ժամերը վորոշվում են հարմարվելով տեղական պայմաններին: Շատ բնական է, այնպես անել, վոր մինչգլինակոչային պարապմունքները ժամանակի տեսակետից բոլորի համար հարմար լինեն, անհնարին է. այստեղ հաշվի յեն առնում մեծամասնությունը:

Գյուղերում մինչգլինակոչային պատրաստությունը կատարվում է կարճատև հավաքների միջոցով, կամ թե դարձյալ, ըստ պայմանների, ամենօրյա հավաքների միջոցով: Մինչգլինակոչային պատրաստությունը կատարվում է յերկու ամսվա ընթացքում—ամեն տարի մեկ ամիս: Մինչգլինակոչայինների անցնելու կարգը պարզ կերպով ցույց է տրված № 4 սխեմայում: Յերբ կանչվում է 1903 թիվը, մինչգլինակոչային պատրաստություն է ստանում 1905 և 1904 թիվը, իսկ յերբ կանչվում է 1904 թիվը, մինչգլինակոչային պատրաստությունն ստանում է 1906 և 1905 թիվը, ու այդպես շարունակ: Յերբ 1903 թիվն իր ծառայությունը վերջացնում է և կանչվում է 1907 թիվը, մինչգլինակոչային պատրաստություն է ստանում 1909 և 1908 թիվը: Մինչգլինակոչային պատրաստությունը կատարվում է ղեկտեմբեր, հունվար,

փետրվար, մարտ ամիսներին, ինչպես դա ցույց է տրված № 5 (տեսնել զբքի վերջում) կարտոգրամմայում:

Նույն տեղում ցույց են տրված յերկրային գործածների աշխատանքները փոփոխակազմի հետ:

Մինչգլինակոչային պատրաստության պարապմունքների ժամանակ յերիտասարդը լուրջ կերպով պատրաստվում է ստանձնել կարմիր-բանակայինին արժանավայել բարձր կոչումը և ռազմական գործի սկզբնական տեղեկություններն է ձեռք բերում: Պարապմունքներին բարեխիղճ կերպով վերաբերվելը մինչգլինակոչայինի գլխավոր և ամենաբարձր քաղաքացիական պարտականությունն է: Նա պետք է պարզ գիտակցի այդ աշխատանքի անհրաժեշտությունը և գործով ցուցահանի իր գիտակցությունը: Այստեղ տեղն է ասել, թե այն հասարակական կարծիքը, վոր կստեղծվի մեր յերիտասարդության մեջ և առհասարակ մեր բոլոր բանվորների ու գյուղացիների մեջ մինչգլինակոչային պատրաստության վերաբերյալ, կլինի վերջին հաշվով մինչգլինակոչային պատրաստության բախտը վորոշողը: Մեր կազմակերպություններն ամենայն ուշադրությամբ պետք է վերաբերվեն դեպի այդ գործը, հակառակ դեպքում

նրանք խաղ կանեն յերկրի պաշտպանության գործի հետ:

Մինչդիմանակոյալին պատրաստությանը նախորդում եայսպէս կոչված նախամինչդիմանակոչային պատրաստությունը: Այդ հասկացողության տակ ե մտնում այն ամբողջ աշխատանքը, վորը խորհրդային քաղաքացիական դպրոցների ուղմականացում ե կոչվում:

Դպրոցների ուղմականացման տակ հասկացվում ե ուսումնական ծրագրի այնպիսի կառուցվածք, վորի մեջ տեղ կբռնի ֆիզիկական կուլտուրան՝ ուղմական թեքումով ե դպրոցների կապը կարմիր բանակի հետ, վորի ընթացքում կտրվի ամենատարրական ծանոթություն բանակի կառուցվածքի, կենցաղի, պատմության ունպատակների հետ: Այս մեծ աշխատանքը մեր պատանեկությունը ե յերիտասարդությունը միշտ կապված կպահի կարմիր բանակի հետ ե կնպաստի, վոր նրա մեջ հետաքրքրություն առաջ գա դեպի ուղմական գործը:

Մեր պատանեկությունը ե յերիտասարդությունը պետք ե ստանա դասակարգային հեղափոխական դաստիարակություն: Այդ ասելով մենք հասկանում ենք հեղափոխությանը նվիրված սերունդ դաստիարակելու խնդիրը: Հեղափոխությունը կռիվ ե հանուն բանվորների

ե գյուղացիների ազատագրման, կռիվ բանվոր դասակարգի գլխավորությամբ, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կռիվ ե շահագործման դեմ, կռիվ ե հանուն սոցիալիստական յերկրի շինարարության ե պաշտպանության: Պրոլետարական իշխանությունն այդ դաստիարակությունը պետք ե տամեր յերիտասարդության:

Մեր շարքերում դեռ գոյություն ունի տարրական ե քաղաքական անգրագիտությունը, ագիտությունը, հետամնացությունը, պասիվությունը: Այս բոլորը մեծ խոչընդոտներ են առհասարակ մեր հեղափոխական շինարարության բոլոր ասպարեզների համար, բայց ես առավել մեր յերկրի պաշտպանության կազմակերպման գործի համար: Ամենակարճ ժամանակում մենք պետք ե հասնենք այնպիսի դրության, վոր այլեւ վոչ մի անգրագետ գինակոչային չունենանք: Բանակը չե, վոր այբուբեն պետք ե սովորեցնի: Մենք այժմ այդ հարկադրված ենք անել, բայց դա խնդիր ե, վորը պիտի լուծի մեր խորհրդային դպրոցը, մեր կոմյերիտմիությունը, մեր բաղուսվարը, մեր արհմիությունները:

Մեր թե դպրոցական ե թե, մանավանդ, արտադրողական աշխատանքի մեջ լայն տեղ

պետք է բռնի ռազմական գործի պրոպագանդան, Կարմիր բանակի պրոպագանդան: Մեր ակումբները մեջ արդեն կամաց-կամաց մուտք են գործում ռազմական անկյունները: Նպատակ պետք է դնել, վոր մեր խրճիթ - ընթերցարանները, մեր ակումբներն ունենան ռազմական բովանդակալից անկյուններ, վորտեղ կարտացոլի Կարմիր բանակի կյանքը և ռազմական տարրական ուսումը: Այդպիսի գործը, ինչպես և հրաձգային գործը յեթե մուտք գործեն մեր ակումբները, հսկայական հետաքրքրութիւն կառաջացնեն դեպի ռազմական գործը: Իսկ զրույցները, դասախոսութիւնները, խմբակային պարամունքները—այս բոլորը հնարավոր են և անհրաժեշտ են մեզ համար: Զպետք է ծածկել, վոր մեր յերիտասարդութեան վերաբերմունքը դեպի Կարմիր բանակը ավելի շուտ միտինգայեն ե յեղել: Մեզ հարկավոր է գործնական կապ հաստատել, ռազմական հետաքրքրութիւն առաջացնել:

Մենք պետք է հասնենք այնպիսի մի դրութեան, վոր բանակ յեկող յերիտասարդը միանգամայն պարզ պատկերացում ունենա մեր սոցիալիստական յերկրի պաշտպանութեան խնդիրների և հեղափոխական պատրաստութեան այդ պաշտպանութեան հետ կապված բոլոր դժ-

վարութիւնները մասին, չխնայելով դրա համար անգամ իր կյանքը:

Կոմյերիտմիութիւնը մեր յերիտասարդութեան ավանգարդն է: Նրա աշխատանքը յերկրի ռազմականացման ու կուլտուրականացման ասպարիզում բացառիկ է: Վոչինչ այնքան հարկավոր չէ այսօր մեր յերիտասարդութեանը, վորքան հեղափոխական ուսումնառական դաստիարակութիւնը: Ուսումը՝ դպրոցում, ակումբում, բջիջում, խրճիթում, խմբակում: Այդ ուսումը պետք է տանել այն ձևով, վոր մեր յերիտասարդ բանվորն ու գյուղացին կարմիր ռազմական գործը համարեն կարևոր գործերից մեկը, իսկ իրենց պարտականութիւնը այդ գործի վերաբերմամբ՝ ամենաբարձր պարտականութիւններից մեկը:

Ռազմական բովանդակութիւնից զերծ ուսումով մենք հեռու չենք գնալ:

Յերկրային սիստեմը, վորը մեր ռազմական շինարարութեան վճռական ու գործնական ուղին է, պահանջում է, վոր բոլորը մասնակցեն ռազմական գործին: Մեր աշխատանքը դպրոցում, ակումբում, խմբակներում, լենինյան անկյուններում և խրճիթ-ընթերցարաններում պետք է այնպես դրված լինի, վոր ռազմական գործը դառնա բոլորի սեփականութիւն: Ամեն

մի պատանի, յերիտասարդ պետք ե դաստիարակվի կարմիր մարտիկ դառնալու համար:

Յերբ մենք ռազմական գործի վրա այնպես չնայենք, թե դրանով միայն վորոշ հասակում և վորոշ ժամանակ պետք ե պարապել, յերբ մենք այնպես կդաստիարակվենք, թե միշտ պետք ե հոգալ ռազմական պատրաստության մասին, յերբ մենք ռազմական գործը կսովորենք ձեռք բերել միշտ ու ամենուրեք, յերբ ռազմական գործը կդարձնենք մեր ուսման, մեր կենցաղի, մեր աշխատանքի անբաժանելի մասը, այն ժամանակ մեր կարմիր բանակը մեր յերիտասարդության համար կդառնա մի դպրոց, վորտեղ նա վոչ թե իր ռազմական անգրագիտությունն ե վերացնում, այլ վորտեղ կատարելագործվում և մասնագիտանում ե հեղափոխական-ռազմական գործի և ուսման մեջ:

Միայն այս դեպքում մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործը կդառնա իրոք բոլոր բանվորների և գյուղացիների գործ, յերբ նրանք մասնակցում են, աշխատում, պատրաստվում, ոժանդակում մեր ամբողջ յերկրի ռազմունակության:

Առանց այդ հիմնական պայմանի յերկրային սխտեմը յերբեք իր նպատակին չի ծառայի, իր նպատակին չի հասնի:

Ո՞վ պետք ե լինի որինակելին, ով պետք ե լինի առաջինն այդ աշխատանքի մեջ:

Ամբողջ Կոմյերիտմիությունը և յուրաքանչյուր կոմյերիտական առանձին-առանձին:

Թող մենք ունենանք ֆիզիկապես առողջ յերիտասարդություն՝ զրազետ, ակտիվ, զարգացած, թող նրա համար միս ու արյուն դարձած լինեն մեր մեծ հեղափոխության ու նրա ղեկավար լինինյան կուսակցության ավանդները. թող նրա մեջ միշտ ապրի հեղափոխական մարտական պատրաստության վոգին. թող նա լավ ուսումնասիրած ու ճանաչած լինի մեր մեծ կարմիր բանակը—այն ժամանակ մեր մեծ Միությունն իր բոլոր թշնամիների ամեն տեսակ վոտնձգություններից միանգամայն ազատված կլինի:

Կառուցենք մեր սոցիալիստական յերկիրը, բայց հենց այդ կառուցումն ապահովելու համար ուսումնասիրենք ռազմական գործը, տարածենք ռազմական գիտելիքներ, քսատիարենք նվիրված մարտիկներ անկախ միացից բանակում եմք մեմք, թե՞ վոչ:





ՀՀ Ազգային գրադարան



NL0925976

1
2279



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.